

ՓՈԽԸՆԲՈՒՆՄԱՆ ՅՈՒՇԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՒ

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՄԻՋԵԻ

Հինգշաբթի՝ 3 մարտ 2016 թականին, Հայաստանի Ազգային Գրադարանի տնօրեն պրն. Տիգրան Զարգարեանի Նոր Զուղա այցելության շրջագծում, համագործակցության յուշագիր կնքեց Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի եւ Հայաստանի Ազգային Գրադարանի միջեւ, նկատի առնելով այն, որ թե՛ Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդը եւ թե՛ Հայաստանի Ազգային Գրադարանը ծառայում են հայագիտության պահպանման ու տարածման գաղափարներին, համամարդկային արժեքների տարածմամբ երիտասարդ սերունդ դաստիարակելուն, հայ պատանիներին հայոց լեզվի, հայ ժողովրդի պատմության, կրօնի եւ ինքնության հարցերին իրազեկելուն եւ հաշի առնելով այն, որ երկու կողմերը շահագրգիռ են հայագիտության զարգացմամբ եւ տարածմամբ:

Յուշագիրը նպաստելու է աշխարհով մեկ սփռած հայագիտական կենտրոնների հետ յարաբերությունների ամրապնդման, խորացման ու երկխոսության խթանմանը, կարեւորելով փաստաթղթերի թւայնացումը, թւային գրադարանի ստեղծումը, հայ տպագիր ժառանգության արժեւորումը, թւայնացման միջոցով վտանգված նիւթերի երկարաժամկետ պահպանումը, «ՀԱՅԿԱԿԱՆՔ» հայագիտական հանգոյցի համապարփակ հայեցակարգի մշակումը եւ կենսագործման հարցերը:

Սոյն առիթով ներկայ էին Թեմական խորհրդի ատենապետ պրն. Վրէժ Տէր Մարտիրոսեանը, փոխատենապետ պրն. Վաչիկ Հայարապետեանը եւ ատենադպիր տկն. Քառուին Դիլանչեանը: Կողմերը խոստացան համագործակցել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում, որպէսզի հայագիտական հետազոտությունները հանրության առաւել լայն շերտերի համար մատչելի դառնան: